

ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
TEXTS ET ETUDES



ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայոց ոտքը, եթէ բոլոր նամիաները չեն,
որ բացել են, գոնեւ ոտնակով արել են:

Ղեւոնդ Ալիշան

Մեր նախապապերի բնապաշտական եւ խորհրդաբանական
աշխարհընկալման դրսեւորումները հաստատող փաստերը սրբ-
ուուած են Հայկական լեռնաշխարհի հազարաւոր ժայռապատկեր-
ների, հնագոյն պաշտամունքային յուշարձանների, սրբատեղինե-
րի, տաճարների, բերդերի եւ ամրոցների, բնակավայրերի աշ-
խարհագրական տեղանունների, ազգագրական հարուստ նիւթերի
մէջ, տարաբնոյթ յօրինուածքների տեսքով:

Բնապաշտական աշխարհընկալման դրսեւորումները քարի
դարից մինչ ուշ միջնադար շարունակական կիրառման պատ-
ճառների մեկնաբանման, տիպաբանական նախատիպերի բացա-
յայտման, պարզաբանման, պահպանման եւ այսօր էլ հնարաւոր
շրջանառման համար անհրաժեշտ պայմանը դրանց ստեղծման
դրդապատճառների պատմութեան ուսումնասիրութիւններ կա-
տարելն է:

Հայ միջնադարեան մեկնողների (Խորենացի, Տաթեւացի,
Շիրակացի, Դաւիթ Անյաղթ, Նարեկացի...) արժէքաւոր գործե-
րին զուգընթաց չափազանց կարեւոր է Վենետիկի Սուրբ Ղազա-
րի Մխիթարեան միաբանութեան կարկառուն գործիչներից մէ-
կի Հայը Ղեւոնդ Ալիշանի գրական ժառանգութեան ուսումնա-
սիրումը:


Հայը Ղեւոնդ Ալիշանի բազում ուսումնասիրութիւններից
առանձնացնելով հրատարակուած «Հայոց հին հաւատքը կամ հե-

1 Մասնաւորապէս՝ Ղեւոնդ Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեռակամ կրօնը, Երևան 2002, 295:


թանոսական կրօնը» ամփոփ աշխատութիւնը, որ մաս առ մաս հրատարակուել է «Բազմավլայ» ամսագրում, նպատակ ունենք յատուկ անդրադառնալ Ալիշանի կողմից ներկայացուած մեր նախապատերի բնապաշտական եւ խորհրդաբանական ընկալումներին: Ընկալումներ, որոնք իրենց մշտական տեղն են գտել հայ մշակոյթի, եւ մասնաւորապէս ճարտարապետութեան, բոլոր ոլորտներում, նախապատմական շրջանից սկսած, մինչ մեր օրերը:



Հետամուսական քամուակ (Բայսաղետ)




Նկար 1. Պատկերներ Ալիշանի գրքից




Նկար 2. Աշխարհի չորս կողմ, կենտրոն, առանցք, երկիր,
երկինք, կենաց ծառ, յաւէրժ ճարտարապետական յօրինուածքի
մոդել մանրակերտ

Դրանց շարքում են աշխարհի քառակողմ բաժանման, մարդ-երկիր-երկինք եռաշերտ եւ եռաբաժան ընկալման, հասարակական յարաբերութիւններում եռաղաս բաժանման համակարգերի (Յկ. 2), ինչպէս նաև թուային, բուսական, կենդանական, տիրեզերածնական, մարդակազմական եւ վերջապէս երկրաչափական խորհրդաբանական պատկեր հասկացութիւնների շարունակական կիրառման հետքերն ու փաստերը։ Այսօր արդէն յայտնի է, որ բլուր-տաճար, բուրգ, զիկլուրատ, Արարատներ, Նոյեան տապան, տաճար-զոհասեղան (Յկ. 3), դամբարան-պանթեոն, եկեղեցի-խաչքար, տուն-քաղաք, բերդ-ամրոց, բառ ու բան, հեթիար եւ հանելուկ, դիւցազներգութիւն եւ էպոս, այլ կառոյց համակարգեր (Յկ. 4, 5), պատկեր, նկար, գրաւոր եւ բանաւոր խօսք եւ մարդու ապրելակերպին բնորոշ այլ հասկացութիւններ հայի ինքնութեան, հայկական լեռնաշխարհում նրա շարունակական գոյութեան փոխկապակցուած կացութաձեւի համակարգուած իրավիճակի արդիւնք են։



Նկար 3. Բլուր տաճար տիպի պաշտամունքային կառոյցի տարածումը
հայկական լեռնաշխարհից դեպի միջագետք



Նկար 4. Սար, զազար, բարձունք հասկացութեան ընդունումը, որպէս
պաշտամունքի վայր, գրհասեղան, տաճար




Նկար 5. Գագար բարձութերի (ուղղահայեաց առանցքի) ֆիքսումը, որպէս պաշտամունքի վայր

Զուգահեռների տրամաբանական շղթայ է նկատում նաեւ Հայկական լեռնաշխարհում նախամարդու բնակութեան եւ մտաւոր գործունէութեան, Պորտաբլուրի համալիրի (Յկ. 6), Նեմրութի պանթէոնի (Յկ. 7, 8), Մեծ եւ Փոքր Մասիսների (Յկ. 9) եւ դրանց հետ կապուած պատումների եւ արտեֆակտերի (Յկ. 10), Նոյեան տապանի պատութեան, Դրախտի, Կենաց եւ իմաստութեան ծառերի, Գրիգոր Լուսաւորիչի առաքելութեան եւ Հայաստանում քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունման, Լուսաւորչի կանթեղ-Արագածի, Արարատեան թագաւորութիւն եւ Արրատայ երկրի, Խոր Վիրապի եւ Ս. Էջմիածին, Կիլիկիա եւ Հայաստան, Հայքի, Հնդեւրոպական լեզուաընտանիքի տարածման, աշխարհասփիւռ հայ ժողովրդի եւ այլ իրողութիւնների միջեւ:

Նախապատմական, մինչքրիստոնէական եւ քրիստոնէական շրջաններում այս խորհրդաբանական ընկալումների արտապատկերումը եւ դրանց կիրառումը շարունակաբար փոփոխուելով եւ վերաիմաստաւորուելով իրենց նախնական շատ իմաստների պահպանումը, ինչպէս նաեւ կիրառելիութիւնը նաեւ ի. դարի հայ արուեստում փաստ է ուստումնասիրութեան եւ համապատասխան եզրայանդումների կրուան:

Այս գործընթացը անհնար է իրականացնել, առանց ուսումնասիրելու Ս. Ղազարի Միհթարեան միաբանութեան կողմից հրատարակուած եւ նաեւ անտիպ հարուստ նիւթերը:

Միհթարեանների ժառանգութեան կարեւորութիւնը շատերն են ընդունել: Մեզ համար կարեւոր է նաեւ Դանիէլ Վարուժանի պատգամը՝ «Զգուշութեամբ կոխեցէք Միհթարեան Հայրերուն նուիրական կողին, ձեր ամէն մէկ քայլը կրնայ հանճարի մը անիւնին հանդիպել, եւ իմ փոխարէն - կը պաղատիմ - Ալիշանի շիրմաքարը անգամ մը համբուրեցէք եւ ապահով եղէք որ մարմարինին անքծութիւնը ձեր շուրբարուն տակ՝ սրտիս պէս պիտի բոցավառուի»:



Նկար 6. Պորտաբլուրի յուշարձանախոսմբը



Նկար 7. Երուանդունիների պանթէսմբ, Նեմրութ լեռ



Նկար 8. Նեմրութ լերան արհեստական գագարը



Նկար 9. Արայի, Արագածի և Մասեաց գագաթները

Յատկապէս ճարտարապետական յօրինուածքների նախատիպէրի բացայայտման եւ ուսումնասիրութեան գործում կարեւոր են Հայր Ղեւոնդ Ալիշանի հետեւեալ դիտարկումները.

ա. Խօսելով կրօնի ծագման մասին Ալիշանը նշում է՝ «ո՞վ կը համարձակուի ասել, թէ իին ազգերի մէջ յստակագոյն կամ նահապետական աստուածապաշտութիւնը առկայ է եղել առաւել վայ, քան Հայաստանում»²: Ասուածի լաւագոյն հաստատումը կարող ենք տեսնել Հայկական լեռնաշխարհում սփուռած միլիոնաւոր ժայռապատկերներում (Ցկ. 11):

Հայկական ժայռապատկերները իրենց նկարուածքով, թեմատիկայով, բազմազանութեամբ, ծիսայ-կրօնական, աստուածապաշտական, տիեզերածնական, երկրային եւ երկնային պատկեր իմաստներով եւ խորհրդաբանութեամբ, բուսական եւ կենդանական պատկերներով, թուագրմամբ իրենց զուգահեռները չունեն

2 Ղեւոնդ Ալիշան, Հայոց հիմ հաւատից կամ հեթանոսական կրօնը, Երևան 2002, 13:

աշխարհում: Այս առումով պաշտամունքային կառույցների յօրինուածքային բաղադրամասերի նախատիպերի ձեւագոյացման գործընթացի մտարմբուռումային խթանիչները պէտք է այստեղ փնտուել: Սրանում համոզուած էր նաեւ Ալիշանը եւ պատահական չէ նաեւ նրա հետեւեալ պատգամը «միտքը երթեք յօժար չէ երաժարուել իմանալու այն, ինչ որ կարող է իմանալ իր նախնիների եւ իին հայրերի գիտեցածից»³:

Բ. Մեր հին հայրերը համոզուած էին, որ «Հայկազունիները իրենց գերագոյն Աստուած նանաչում էին նոյին, որ Երկինքն է եւ Արէտիայ (միթէ Արարատ) անուամբ Երա կենջը՝ Երիրին, որ Երկնից սերմնաւորուած ծնել է կամ գոյաւորել է բոլոր արարածներին»⁴: Երկիր, Երկինք եւ յետագայում նաեւ անդրաշխարհ եռամիասնութեան (եռաշերտ բաժանման) դրսեւորումները առկայ են պաշտամունքային կառույցներիի ծաւալատարածական յօրինուածքներում ինչի մասին մենք առիթ ենք ունեցել առանձին անդրադառնալ:

Գ. Հիմնական, անկիւնաքարային նշանակութիւն ունի Ալիշանի մեկնութիւնը Արեւ-Արեգակի եւ նրա չորս ուղեկից երիշարների (Ենիկ, Մէնիկ, Բէնիկ եւ Սէնիկ)⁵ մասին: Այստեղ ուղղակի զուգահեռ ենք տեսնում Գեղամայ լեռներից յայտնի ժայռապատկերի եւ մեր նախնիների աշխարհի քառակողմ բաժանման համակարգի մասին հաւատալիքների եւ պատկերացումների միջեւ, պատկերացումներ, որոնք նոյնպէս իրենց ուղղակի դրսեւորումները ունեն ճարտարապետութեան մէջ:


Դ. Զափազանց կարեւոր է նաեւ Ալիշանի դիտարկումները լեռների, քարերի, կրակի, ջրի, բուսեղինների եւ ծառապաշտութեան միջեւ: Այստեղ նկատելի են Երկիր, Երկինք, Վերից վար, վարից Վեր փոխկապի, աստուածները Երկնքում տեղակայելու, նրանց գալուստը Երկիր բարձրաբերձ լեռներից դիտարկելու, աստուածներին սիրաշահելու միտումով, նրանց ձօնուած տաճարներն ու պաշտամունքային յօրինուածքները, զոհասեղանները լեռների (բնական) եւ արհեստական բլուր տաճարների գագաթներին կառուցելը, Երկրային թագաւորներին բարձր վայրերում կամ դրանց նմանութեամբ արհեստական բլուրների վրայ, (կլոր թաղումներ եւ այլն) յուղարկաւորելու ծէսի հաստատումն ու ի-

3 Անդ, 9:

4 Անդ, 20:

5 Անդ, 52:

բականացումը (Սիս կամ փոքր Մասիս)⁶, Նեմրուլթ լեռ, բլուր-տաճար, բլրաձեւ դամբարաններ եւ այլն:




Նկար 10. Փոքր Մասիսի նորայայտ դամբարանադաշտը

Օրինակները շատ են աւելի կարելի է յիշատակել, դա կը նշանակէր ամբողջութեամբ յղել Ալիշանի նշուած եւ այլ աշխատութիւնները։ Սակայն կարեւոր է այն հանգամանքը, որ Ալիշանական դիտարկումները կարեւոր են ոչ միայն ճարտարապետական նախատիպերի փնտուառուքի համար, այլ բոլոր այն ասպարէզների հետագօտութեան, որոնք վերաբերւում են հայկական լեռնաշխարհի եւ յարակից շրջանների պատմութեանը ու տեսու-

6 Ըստ արար պատմիչ Եսկուտ Ար Համալիի՝ «Արմինիայի մէջ երկու լեռներ են, որոնց վրայ են գտնուած Հայաստանի թագաւորների շրիմները իրենց գանձերով»։ տե՛ս Արարական աղքիւրները Հայաստանի եւ հարեւան երկրմերի մասին, Երևան 1965, 366, 51:

թեանը, որոնցում ակնյայտ են բնապաշտական եւ խորհրդաբանական ընկալումների բազմաթիւ դրսեւորումները։ Իսկ այդպիսիք իրօք շատ են։



Նկար 11. Օրինակներ հայկական լունաշխարհի ժայռապատկերներից

Մխիթար Սեբաստացին համոզուած էր, որ եթէ Հայ ժողովուրդը հեռանայ իր նախնիներու հաւատքէն, դատապարտուած է կորսնցնելու իր էութիւնը կազմող տարրը, իր նկարագիրը⁷, իսկ նկարագիրը ոչ միայն քրիստոնէական պատկերացումների հիման վրայ էին ձեւաւրուել այլ նաեւ հին հաւատքի: Թերեւս այս էր պատճառը, որ գիտակցելով ինդրի լրջութիւնը Մխիթարեան հայրերը հետազոտում եւ հրատարակում էին այն ամէնը, ինչը կը նպաստէր հայի նկարագրի եւ էութեան պահպանմանը: Դա վերաբերում էր թէ' հայ պատմիչների, թէ' հայրապետների, թէ' հեթանոս եւ քրիստոնեայ աշխարհի հեղինակների գործունէութեան արդիւնքների հրատարակութեանը եւ այլն: Բաւական է յիշատակել Հ. Միքայէլ Զամէնանին (1738-1823), իր եռահատոր «Հայոց Պատմութիւն» կողմողային աշխատանքով, Հ. Հուկաս ինձիճեանի (1758-1833), «Մտորագրութիւն հին Հայաստանեաց» եւ «Հնախօսութիւն Հայաստանեաց Աշխարհի» հատորները, Հ. Համազասպ Ոսկեանի ուսումնասիրութիւնները, նուիրուած Հայաստանի բոլոր նահանգների վանքերին եւ եկեղեցիներին, Հ. Գաբրիէլ Նահապետեանի, «Քրիստոնէական նարտարապետութիւն, Ուր է կերրոննական գմբեթաւոր նարտարապետութեան խանձարուրքն» եւ այլ արժէքաւոր աշխատութիւններ:

Մեր նախապատերի կողմից աշխարհի մասին բնափիլիսոփայական պատկերացումների յետագայ ուսումնասիրութիւնները յատկապէս Ալիշանի անտիպ նիւթերի հետեւողական եւ բազմակողմանի ուսումնասիրութեան հիման վրայ⁸ էլ աւելի կը հարստացնի մեր գիտելիքները հայ մշակութային ժառանգութեան բացայացման, արժեւորման, պահպանման եւ հանրահռչակման գործընթացում:

Զնայած այն հանդամանքին, որ Ալիշանը իր գրքի վերջաբանում իր ուրախութիւնն է յայտնում, որ այսպիսի յիշատակով քաւուում եմ գրչիս՝ այսպիսի խափանուած ու խափանելի նիւթի մասին գրելը, այնուամենայնիւ չափազանց մեծ է նրա դերը հայ հին աշխարհընկալման բանալին հասկանալու գործում:

7 Տեսի գերկիրն Խուալիոյ, Երեւան 2005, 243:

8 Հայաստան Հայկագանց ցիքրամ, Ժողովի, Հայ վանորայի, Ամկազմ Հայաստան, Վարք սրբոց, Հայկարան (անտիպ), ինչպէս նաև նշմարք եւ նշխարք Հայաստանի, Վենետիկ 1870, Վարդամայ վարդապետի Հաւաքումն պատմութեան, Վենետիկ 1862 եւ այլ աշխատութիւնները:

9 Ղեկոնդ ԱԼԻՇԱՆ, Հայոց հիմ հաւատիք կամ հերանոսական կրօնը, Երեւան 2002, 237:

Ինքն էլ արդէն համոզուած էր, որ նիւթը անսպառ է եւ ոչ բաւականաչափ կամ ոչ արուեստագիտական հմտութեամբ փորուած¹⁰:

Նշանակում է իրօք անելիքները շատ ու շատ են եւ ոչ միայն ճարտարապետական յօրինուածքների նախատիպերի բացայացումանը ուղղուած:

ԱՇՈՏ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Summary

NATURALISTIC AND SYMBOLIC PERCEPTIONS EXPRESSED IN GHEVOND ALISHAN'S WORKS

ASHOT GRIGORYAN

The Armenian foot has traversed all the ways
even though having not discovered them.

Ghevond Alishan

The artifacts certifying the naturalistic and symbolic perceptions of our ancestors are spread all over the Armenian highlands in the shape of thousands of rock sculptures, ancient cult monuments, sanctuaries, temples, castles, and fortresses, as well as geographical names, ethnological materials, and other compositions. For interpretation as well as revelation, explanation, preservation, and even current possible usage of their prototypes, it is necessary to carry out investigations to understand the reasons of their creation.

It is quite important that the investigation of the thousands of artifacts is accompanied by studying written sources about them. Along with the valuable works left by the medieval Armenian historians (Khorenatsi, Tatevatsi, Shirakatsi, Davit Anhaght, Narekatsi, etc.), it is important to study the literary heritage of Father Ghevond Alishan, one of the outstanding scientists of the St. Lazarus Mekhitarist Congregation of Venice.

By distinguishing Ghevond Alishan's compact work *Ancient Armenian Faith or Heathenism* (which was published in parts in the journal *Bazmavep*) among his numerous studies, we have a purpose to specially refer to our ancestors' naturalistic and symbolic perceptions introduced by Alishan that have always been expressed in all the fields of Armenian art (particularly in architecture) beginning from prehistoric period till nowadays.

In his book, Ghevond Alishan has thoroughly presented typical phenomena of heathen life, ancient faith, and cult worship of gods including the Armenian religion, faith, worship, God, naturalism (symbolic perceptions and worship of mountains, stones, fire, water, vegetation, and fauna) and luminaries (worship of the sun, moon, stars, climate).

The studies of the Armenian intellectual heritage allow us to conclude that many of religious and symbolic expressions described by Alishan have passed on to Christian culture and preserved until nowadays. Such interpretations found in Alishan's heritage are widely used by various researchers and, today, many of his provisions are admissible and applicable in the scientific world. Current studies show that even the slight examination of the structural peculiarities of the most important monuments of the Armenian highlands confirms the inevitable practicing of their creators' naturalistic perceptions. Among them are the traces and facts of the repeatable application of the figural concepts of quadrilateral division of the world, perception of human-earth-heaven tripartite and three-layer division, three classes in society relations, as well as numerical, vegetable, animal, universe-originating, anthropological and geometrical symbols.

Today it is already known that such structural concepts as hill-temples, pyramids, ziggurats, depictions of Mount Ararat, Noah's Ark, cathedral-altars, sepulcher-pantheons, church-*khachkars*, house-cities, castle-fortresses, word-speeches, fairy-tales and riddles, epopee and epics are the results of interrelated situation of the Armenian identity and its continuous existing in the Armenian highlands. There is also a logical chain of parallel realities such as the dwelling of primitive men in the Armenian highlands and his intellectual activities, Portablur, the Nemrut pantheon, the Greater and Lesser Massises, Noah's Ark, paradise, tree of life and wisdom, Gregory the Illuminator's torch – on Mount Aragats, the Ararat Kingdom, Khor Virap and Holy Etchmiadzin, Cilicia and Armenia, the spreading of the Indo-European language family, Armenian diaspora, etc.

Reflections of these symbolic perceptions in the prehistoric, pre-Christian and Christian periods, their application and continuous alterations, re-interpretations and preservation of many of their initial meanings, and also their applicability in the 20th century Armenian art are real and contentious topics for studying and making certain conclusions.

Further investigations of our ancestors' naturalistic perceptions of the world and especially the comprehensive studies of Ghevond Alishan's unpublished works will certainly enrich our knowledge of the Armenian cultural heritage in the process of its revelation, evaluation, preservation, and recognition.